ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ

ԴԱՏԱԿԱՆ ԿԱԶՄԻ ՈՐՈՇՈՒՄ

ԱՆՀԱՏԱԿԱՆ ԴԻՄՈՒՄԻ ԸՆԴՈՒՆԵԼԻՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Քաղ. Երևան 29 մարտի 2019թ.

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանի
դատական կազմը՝

Նախագահությամբ՝ Ա. Դիլանյանի
Անդամակցությամբ՝ Ֆ. Թոխյանի
Ա. Պետրոսյանի

Քննության առնելով «ՍՈԳԼԱՍԻԵ-ԱՐՄԵՆԻԱ» ՍՊԸ-ի անհատական դիմումի
ընդունելիության հարցը,

Պ Ա Ր Զ Ե Ց.

1. «ՍՈԳԼԱՍԻԵ-ԱՐՄԵՆԻԱ» ՍՊԸ-ն 2019 թվականի մարտի 15-ին դիմել է Սահմանադրական դատարան՝ խնդրելով. «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 62-րդ հոդվածի 1-ին մասի բ) կետին, մասնավորապես, «ոչ իրավասու վարչական մարմին» եզրույթին իրավակիրառական պրակտիկայում տրված մեկնաբանությունը ճանաչել ՀՀ Սահմանադրության 1-ին, 3-րդ, 10-րդ, 60-րդ, 75-րդ, 79-րդ հոդվածներին հակասող և անվավեր»:

2. Մատնանշելով Սահմանադրության մի շարք հոդվածներ՝ մասնավորապես, Սահմանադրության 1-ին, 3-րդ, 10-րդ, 60-րդ, 75-րդ, 79-րդ հոդվածներով նախատեսված իրավակարգավորումները, դիմողը գտնում է, որ վիճարկվող դրույթը, պայմանավորված

վերջինիս նորմատիվ բովանդակության անորոշությամբ, իր նկատմամբ կիրառվել է Սահմանադրության պահանջներին հակասող մեկնաբանությամբ:

Դիմողի պնդմամբ՝ վիճարկվող դրույթը, պայմանավորված նորմատիվ բովանդակության անորոշությամբ, իրավակիրառ պրակտիկայում հանգեցրել է տարբեր մեկնաբանությունների, ինչի արդյունքում խախտվել է իրավական որոշակիության սկզբունքը, ինչն էլ, իր հերթին, հանգեցրել է իր սեփականության իրավունքի խախտմանը:

Դիմողի կարծիքով՝ վիճարկվող դրույթով նախատեսված այն իրավակարգավորումը, ըստ որի՝ վարչական ակտն առ ոչինչ է ճանաչվում, ի թիվս այլնի, նաև այն դեպքում, երբ այն ընդունում է ոչ իրավասու մարմինը, տարբեր բովանդակություն է ստացել դատարանների կողմից տրված մեկնաբանության արդյունքում:

Վկայակոչելով Վճռաբեկ դատարանի՝ ՎԴ/2434/05/08 գործով 2009 թվականի ապրիլի 30-ի որոշմամբ նախադեպային նշանակություն ունեցող իրավական դիրքորոշումներն առ այն, որ եթե վարչական ակտով անձը զրկվում է պատշաճ ընթացակարգով ճանաչված և գրանցված սեփականությունից, ինչը փաստորեն կատարվում է ոչ դատական կարգով, ապա առկա է վարչական ակտն անվավեր ճանաչելու հիմք, դիմողը գտնում է, որ խնդրո առարկա դրույթի վերաբերյալ ձևավորվել է հակասական իրավակիրառական պրակտիկա, իսկ Վճռաբեկ դատարանի 2018 թվականի նոյեմբերի 27-ի որոշմամբ այդ հակասական պրակտիկան չի շտկվել, այլ հանգեցրել է ոչ իրավաչափ լուծումների:

3. Ելնելով դիմումի և կից փաստաթղթերի ուսումնասիրությունից, ղեկավարվելով «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 29 և 69-րդ հոդվածների պահանջներով՝ Սահմանադրական դատարանի դատական կազմը փաստում է, որ անհատական դիմումի հիման վրա գործի քննության ընդունումը ենթակա է մերժման հետևյալ պատճառաբանությամբ.

գործի դատավարական նախապատմությունը վկայում է, որ Լյուբով Փիլոյանը հայցադիմում է ներկայացրել ՀՀ վարչական դատարան ընդդեմ Երևանի քաղաքապետարանի, «ՍՈԳԼԱՍԻԵ-ԱՐՄԵՆԻԱ» ՍՊ ընկերության՝ խնդրելով ճանաչել Երևանի քաղաքապետի 2008 թվականի մայիսի 15-ի թիվ 2249-Ա որոշման առ ոչինչ լինելը և, որպես դրա հետևանք՝ անվավեր ճանաչել Երևանի քաղաքապետարանի և «ՍՈԳԼԱՍԻԵ-ԱՐՄԵՆԻԱ» ՍՊԸ-ի միջև 2008 թվականի մայիսի 27-ին կնքված «Հողամասի ուղղակի վաճառքի մասին» պայմանագիրը և Լյուբով Փիլոյանին պատկանող՝

Երևան քաղաքի Արամի փողոցի թիվ 38 հասցեում գտնվող 332,6քմ մակերեսով հողամասի նկատմամբ «ՍՈԳԼԱՍԻԵ-ԱՐՄԵՆԻԱ» ՍՊԸ-ի անվամբ կատարված սեփականության իրավունքի պետական գրանցումը: ՀՀ վարչական դատարանի 01.09.2017թ. վճռով Լյուբով Փիլոյանի կողմից ներկայացված հայցը մերժվել է այն հիմնավորմամբ, որ բացակայում է Երևանի քաղաքապետի 16.03.2006թ. թիվ 357-Ա և 15.05.2008թ. թիվ 2249-Ա որոշումների առ ոչինչ լինելը ճանաչելու օրենքով սահմանված որևէ հիմք:

Լյուբով Փիլոյանը ՀՀ վարչական դատարանի վերոնշյալ վճռի դեմ ներկայացրել է վերաքննիչ բողոք: ՀՀ վերաքննիչ վարչական դատարանի 19.07.2018թ. որոշմամբ ՀՀ վարչական դատարանի 01.09.2017թ. վճիռը մասնակի բեկանվել է և փոփոխվել. ճանաչվել է Երևանի քաղաքապետի 2006 թվականի մարտի 16-ի թիվ 357-Ա որոշման առ ոչինչ լինելը, որպես հետևանք մասնակի՝ 332.6 քմ մակերեսով հողամասի մասով, վերացվել է Երևանի քաղաքապետի 2008 թվականի մայիսի 15-ի թիվ 2249-Ա որոշումը, Երևանի քաղաքապետարանի և «ՍՈԳԼԱՍԻԵ-ԱՐՄԵՆԻԱ» ՍՊԸ-ի միջև 2008 թվականի մայիսի 27-ին կնքված «Հողամասի ուղղակի վաճառքի մասին» պայմանագիրը և Երևան քաղաքի Արամի փողոցի թիվ 38 հասցեում գտնվող 332.6 քմ մակերեսով հողամասի նկատմամբ «ՍՈԳԼԱՍԻԵ-ԱՐՄԵՆԻԱ» ՍՊԸ-ի անվամբ կատարած սեփականության իրավունքի պետական գրանցումը:

«ՍՈԳԼԱՍԻԵ-ԱՐՄԵՆԻԱ» ՍՊԸ-ն նշված գործով ներկայացրել է վճռաբեկ բողոք: ՀՀ վճռաբեկ դատարանի 27.11.2018թ. որոշմամբ թիվ ՎԴ/2000/05/16 վարչական գործով ՀՀ վերաքննիչ վարչական դատարանի 19.07.2018թ. որոշման դեմ «ՍՈԳԼԱՍԻԵ-ԱՐՄԵՆԻԱ» ՍՊԸ-ի վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը մերժվել է այն հիմնավորմամբ, որ բողոք բերած անձի փաստարկները բավարար չեն ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 161-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված պայմանների (բողոքում բարձրացված հարցի վերաբերյալ վճռաբեկ դատարանի որոշումը կարող է էական նշանակություն ունենալ օրենքի և այլ նորմատիվ իրավական ակտերի միատեսակ կիրառության համար, եթե՝ առնվազն մեկ այլ գործով ստորադաս դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած դատական ակտում միևնույն նորմը կիրառվել է կամ չի կիրառվել հակասող մեկնաբանությամբ, բողոքարկվող դատական ակտում որևէ նորմի մեկնաբանությունը հակասում է վճռաբեկ դատարանի որոշման մեջ տվյալ նորմին տրված մեկնաբանությանը, դատարանի կիրառած նյութական կամ դատավարական իրավունքի նորմի կապակցու-

թյամբ առկա է իրավունքի զարգացման խնդիր) առկայությունը հիմնավորված համարելու համար:

Սահմանադրական դատարանի դատական կազմը գտնում է, որ կոնկրետ սահմանադրական վերահսկողության շրջանակներում, անձը՝ կոնկրետ գործի շրջանակներում, սպառելով ներպետական դատական պաշտպանության բոլոր միջոցները, կարող է դիմել Սահմանադրական դատարան, երբ առկա է դատարանի վերջնական ակտը, վիճարկում է այդ ակտով իր նկատմամբ կիրառված նորմատիվ իրավական ակտի դրույթի սահմանադրականությունը, ինչը հանգեցրել է Սահմանադրության 2-րդ գլխում ամրագրված իր հիմնական իրավունքների և ազատությունների խախտման՝ հաշվի առնելով նաև համապատասխան դրույթին իրավակիրառ պրակտիկայում տրված մեկնաբանությունը: Սահմանադրական այս դրույթի լույսի ներքո ենթադրյալ հակասահմանադրական նորմի կիրառման և/կամ իրավակիրառ պրակտիկայում վերջինիս տրված մեկնաբանության արդյունքում անձի՝ Սահմանադրության 2-րդ գլխում ամրագրված այս կամ այն իրավունքի խախտումը պետք է կրի շարունակական բնույթ, և միայն սահմանադրական արդարադատության արդյունքում կայացված համապատասխան դատական ակտի հիման վրա անձը պետք է հետագայում հնարավորություն ունենա վերականգնելու իր խախտված իրավունքները: Հակառակ պարագայում, կաղճատվի այն նպատակը, որին միտված է կոնկրետ սահմանադրական վերահսկողությունը:

Վերոգրյալի լույսի ներքո, Սահմանադրական դատարանի դատական կազմը փաստում է, որ խնդրո առարկա իրավիճակում դիմողը, ներկայացնելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 62-րդ հոդվածի 1-ին մասի բ) կետին իրավակիրառ պրակտիկայում տրված մեկնաբանությունը Սահմանադրությանը հակասող և անվավեր ճանաչելու խնդրանք, Սահմանադրական դատարանում ըստ էության բարձրացրել է իր նկատմամբ կայացված դատական ակտերի իրավաչափության հարց նույն տրամաբանության շրջանակներում, երբ վիճարկում էր ՀՀ վերաքննիչ վարչական դատարանի 19.07.2018թ. որոշումը վճռաբեկության կարգով:

Համաձայն Սահմանադրական դատարանի 2009 թվականի մարտի 17-ի ՍԴԱՈ-21 աշխատակարգային որոշմամբ արձանագրված իրավական դիրքորոշման՝ բոլոր այն դեպքերում, երբ դիմողը, ձևականորեն վիճարկելով օրենքի դրույթի սահմանադրականության հարց, ըստ էության բարձրացնում է այդ դրույթի կիրառման իրավաչափության հարց, ապա այդպիսի դիմումները ենթակա են մերժման՝ որպես Սահմանադրական

դատարանի քննության ենթակա հարց չառաջադրող դիմումներ: Հետևաբար, այս առումով առկա է գործի քննության ընդունումը մերժելու՝ «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով նախատեսված հիմք:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով՝ Սահմանադրական դատարանի դատական կազմը

Ո Ր Ո Շ Ե Ց.

«ՍՈԳԼԱՍԻԵ-ԱՐՄԵՆԻԱ» ՍՊԸ-ի անհատական դիմումով գործի քննության ընդունումը մերժել:

Նախագահող՝

Անդամներ՝

29 մարտի 2019 թվականի
ՍԴԴԿՈ-14